## 60. ԿԱՊՍ ԷՆՈՂ ՄԾԱԿ

Կէղնի, չէղնի թաք տղեմ՝ կէղնի, էդ տղեն կէլնի ուր քաղքեն, կէրթա ուրիշ քաղաքըմ, մարդում մը հ՝ռաստ կիգա։

Էդ մարդ էդ տղին կասե.—Տղա՛, կվարձվի՞ս։

Տղեն կասե.—Հա՛։

Կառնե կիգա ուր տուն, հախ լէ չկտրե։ Իրեք տարի կբանցու զտղեն, հախ չի տա։ Տղեն զուր հախ էձդեր է աղի խիղճ։ Իրեք տարին օր կխըլըսի, տղեն կասե.—Ես էլ չըմ աշխատի, տուր զիմ հախ, կէրթամ իմ տուն։

Մարդ կրերե տարուն մեկ խըռոշ, իրեք տարուն իրեք խըռոշ կիտա, կասե.—Քու հախ էդա է։

Տղեն ձեն չհանե, կառնե զիրեք խըռոշ, կիգա շուկեն, կասե. «Էդա իրեք խըռոշով ես ի՞նչ առնիմ, առնիմ տասմալըմ տանիմ իմ կնկան՝ իմ մեր կրոկի, առնիմ տանիմ իմ մոր՝ իմ կնիկ կրոկի»։

Հ՝ըռաստ կիգա քուլաքըմ, կասե. «Չէ՛, զէդա առնիմ տանիմ, կթենք զմըր կովեր վըր հ՝ըմնում էլ աղեկ է»։

Կառնե զքուլաք, կէձդե փետի ծերն ու կիգա, ճամբախ անձրև կզարկե վրեն, կհանե զուր հալավ, կդնե ուր գլխուն ու զքուլաք կկոռծե վրեն։ Կասե. «Օր հալավն վրես մնա, կտղկի, չըմ կռնա

չորցու, ես թռչիմ, կէլնիմ շորով մը չորցում զիս, կհագնիմ զիմ հալավն ու կէրթամ»։

Անձրև կկտրի, կէլնի զուր հալավն կհագնի, կէրթա, կիշքի, էնգիեն դարվեշըմ էկավ։ Դարվեշ կիշքի օր տղեն չոր ցամաք է, հ՚ինք լըխկեր է, էղեր է մուկ. կասե.—Տղա՛, քու վրեն անձրև չէ-կե՞ր է։

Տղեն կասե.—Իմա՞լ չէկեր է։

— Օր էկեր է, հ՚որի՞ չտըզկեր իս, քու հունարն ի՞նչ է, ասե՝ ես լէ զիմ հունար կասեմ։

Տղեն կասե.—Իմ հունար ի՞նչ է, իմ հունար էդա քուլըքի մեշն է։ Ես գացի մարգում՝ մոտ իրեք տարի մշակ էղա, օր հ՚էլա կի-զենք, ասի. «Զիմ հախ տուր էրթամ», հանեց իրեք խըռոշ տվեց, ասեց. «Քու հախ էդա է»։ Զեն չհանի, առա զիրեք խըռոշն էկա, ասի. «Ես էդա իրեք խռոշով ի՞նչ առնիմ, առնիմ դասմալըմ տա-նիմ իմ կնկան՝ իմ մեր կըռկի, մոր տանիմ՝ կնիկ կըռկի»։ Հըռաստ էկավ էդա քուլաք, ասի. «Վալլահի, զէդա քուլաք կառնիմ կէրթամ, զմըր կովեր կթինք հ՚ինք, նը էնդոր խաթր թըղ մնա, նը էնդոր»։

Տղեն օր հըմալ ասեց, դարվեշի սիրտ ցավաց վըր տղին։ Ասեց.—Արի ես լէ քզիկ զիմ հունարք սորվըցում, դարձի գնա քու աղի տուն, բալքիմ զքու հայիֆն առնիս։ Ասեց.—Իմ հունար լէ կապս էնելն է, կապս կէնիմ, մարդ կկապիմ՝ ուր տեխեն չը լըպըթի, տղին աղեկըմ զկապս էնել սորվեցուց ու թո-ղեց գնաց։ Տղեն դարձավ էկավ աղի տուն, յալվարմիշ էղավ։ Ասեց.—Ջանը՛մ, հըմեն ես իրեք տարի մշկութեն էրի քզիկ հախ չտվիր, չտվիր, չտվիր դարձեր իմ էկի, կխնդրիմ օր զիս մեկ լէ հացու փոր առնես քու տան մեջ։

Խարուլ էրեց, մեկ լէ գնաց զուր մշկութեն կէներ։

Էդ մարդուն նշանլու ախչիկըմ կեր, հ՚ըմն օր հ՚իրկուն տղեն կիգեր քներ ախչկա մոտ, լուսուն կելներ կէրթեր։ Օր մը լէ էկեր էր քնի, մշակ գնաց տեսավ, օր նշանլուն ու փեսեն հ՚իրարու խեչ քնուկ ին, կարդաց վըր էդոնց՝ կպան հ՚իրար։ Լուսուն հ՚էլան, տե-սան օր ախչիկն ու ուր նշանլուն կպուկ են հ՚իրար։

Հավար, մադաթ, էդ ի՞նչ էր էղավ։

Տվին տաս օսկի տղին, ճամբին հեքիմի հ՚ետևեն, առան զհե-քիմն էկան։

Հեքիմն ֆայթոնով օր էկավ հար էդ մարդու դուռ, մշակ կար-դաց վրեն, հեքիմն ու ֆայթոն կպան հ՚իրար։

Հեքիմն ասեց.—Ինչ մեղավոր մարդ է էդա փեղեվանք, էկանք էդոր դուռ, մենք լէ կպանք հ'իրար։

Հոկուց կղարկին, կղարկվին, էլ հ'ո՞ւր կա չկա հեքիմ։ Կասեն՝ «Պառավրմ լէ ֆըլան տեխ կա»։

Տաս օսկի կիտա մշկու ձեռք, կճամբի պառվու հ'ետևեն։ Տղեն կէրթա պառվու հ'ետևեն, կառնի կիդա։ Կիդան, կիդան կանին ջրի մը պռուկ, պառավ կասե տղին.—Արի՛, շալկե զիս, հ'ընցու։

Տղեն կասե.—Վալլահի, հար հ'էսօր ես մարդ չըմ շալկեր ի ղչուր հ'ընցուցի, տկլոզցի, զքու հալավ կապե գլխուդ, լոխըռդի հ'ընցի։

Պառավ տկլոզցավ, զշորեր կապեց վըր գլխուն, զէրկու ձեռք դրեց վրեն, հ'ընցավ ջրով էնդի, տղեն կարդաց, պառավ ձեռներ մնաց կապուկ վըր գլխուն, տկլոզ։

Էկան քիչըմ տեխ, հովիվըմ ճյուղըմ օչխար հ'առեջ՝ էն դիեն կիդեր, պառավ հավար թալեց հովվին։ Հովիվ էկավ օր ձեռքերմերքըր հ'իջուցներ պառվու գլխու վրավեն, փետ տվեց պառվու թերմաշ, հովիվն ու պառավ մանցին կպուկ հ'իրար։ Օչխար մնաց էնտեխ։ Հովվի փետ մնաց կպուկ պառվու գոդ, տղեն տվեց զէդոնք քաղքի միջով հ'իրար, առավ էկավ։ Էկավ դուռ, տեսան օր պառավրմ ու հովիվրմ կպուկ ին հիրար, ինչ էրին՝ չկառցան մըտնեն ներս։ Ժողովուրդ հ'ըմեն թափեր էր, հող թափեր գետին՝ չհ'ընկներ։ Բոռացին ասին աղին.—Հ'ելի արի տեսնանք, էդ ի՞նչ է էղի, էդրանք հ'որին են կպի հ'իրար։

Աղեն էրեց օր ուր տեխեն հ'ելներ, չխըլվըլաց, մնաց կպուկ տեխ բը տեխ. տղեն ընդոր վրեն լէ կարդացեր էր։

Էդ քաղքի մախլուխն է, կտեսնա օր չէդնի, քոմեցին զիրար, էլան էկան աղի մոտ, ասին.—Կա ու չկա էդի քու տան մեջեն է, էդա աղից մադա, մարդ զէդ բան չէրեր է։

Կանչին զմշակ, բերին ասին.—Էկո, զօղորդն ասե, էդ իմա՞լ է էղի։

Տղեն ասեց.—Հա, վալլահ, իմ էրածն է։

Ես էկա էդա քաղքի մեջ օր աշխատենք, հ'ըռաստ էկա էդա մարդուն, ասեց՝ չը՞ս վարձվի, ասի՝ կվարձվիմ։ Առավ զիս, էկավ ուր տուն, զիմ հախ չէրեց, ես լէ թողի ուր խղճին։ Իրեք տարի էրի մշկութեն, ասի՝ հ'էլնիմ էրթամ իմ տուն։ Ասի. «Աղա, վալլահի, ես կէրթամ իմ տուն, տուր զիմ հախ»։ Բերեց իրեք խըռոշ



32—276

տվեց, ասեց. «Քու հախ էդա է»։ Ես լէ առա, գացի, քանիմ՝ օր, մեկ լէ դարձա էկա, զէդ բան էրի։

Ջաղամաթն ասեց.—Հախ ունի, հավասըզութեն մ'էնի, տուր զէդ մարդու հախ, թըղ էրթա։

Բերին խուրճիմ՝ օսկի տվին, ասին. «էդա քու հախ»։ Հարիր օսկի լէ հեքիմ տվեց, հովիվ լէ՝ զճուղ օշխար։

Տղեն ասեց.—Ես կհարձըկիմ, կընցնիմ կէրթամ։

Առավ զփարեքն, էկավ էնտեխ, օր թողեր էր զհովիվն ու զօշխար տվեց հ'առեջ, քշեց էլավ սար, կանավ կարդաց։ Հարձըկվան փեսեն ու ախչիկն հ'իրարուց, պառավն ու հովիվն հ'իրարուց ու գացին ուրանց տուն, տղեն լէ թողեց էկավ ուր տուն, փրթավ ազատավ։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։